

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

**5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)**

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2004թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 13 ցուցանիշների վերաբերյալ.

**1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի**

*(հազ. մարդ)*

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2003 թ. հունվարի 1-ի դրությամբ	3210.3	1666.7	1543.6
2004 թ. հունվարի 1-ի դրությամբ	3212.2	1665.5	1546.7
2005 թ. հունվարի 1-ի դրությամբ	3215.7	1666.9	1548.8

**2. Կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 2001-2003թթ.<sup>1</sup>**

*(տարի)*

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2001թ.	73.1	76.1	70.0
2002թ.	73.0	75.9	69.8
2003թ.	72.9	75.8	69.9

**3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

*(1000 կենդանի ծնվածի հաշվով)*

	Ընդամենը	Աղջիկներ	Տղամեր
2002թ. հունվար-դեկտեմբեր	14.0	12.7	15.1
2003թ. հունվար-դեկտեմբեր	12.0	10.2	13.4
2004թ. հունվար-դեկտեմբեր	11.8	10.1	13.3

**4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

*(1000 կենդանի ծնվածի հաշվով)*

	Ընդամենը	Աղջիկներ	Տղամեր
2002թ. հունվար-դեկտեմբեր	17.0	13.7	19.9
2003թ. հունվար-դեկտեմբեր	13.6	11.9	14.9
2004թ. հունվար-դեկտեմբեր	13.2	11.6	14.5

5. Մայրական մահացությունը 100.000 կենդանածնի հաշվով 2004թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 26.6 (10 դեպք), իսկ 2003թ. հունվար-դեկտեմբերին՝ 22.4 (8 դեպք):

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2004/2005 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

8. Մեկ սենյակի հաշվով բնակիչների միջին թվաքանակը, (չհաշված խոհանոցը և լողասենյակը) ըստ տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության

<sup>1</sup> Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը, միջին հաշվով, պետք է ապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

արդյունքների\* կազմել է 1.4 մարդ: Ընդ որում միայն 1 սենյականոց բնակարանների և առանձնատների կտրվածքով բնակչության միջին թվաքանակը եղել է 2.5 մարդ, 2 սենյակին՝ 1.8 մարդ, 3 սենյակին՝ 1.4 մարդ:

9. Խմելու ջրի մատչելիությունն ըստ աղբյուրների, համաձայն տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, բնութագրվում է հետևյալ կերպ՝

- կենտրոնացված ջրամատակարարում ունեն տնային տնտեսությունների 91.3%,
- ջրհորից կամ աղբյուրից օգտվում են տնային տնտեսությունների 2.6%,
- սեփական համակարգից օգտվում են տնային տնտեսությունների 2.3%,
- բերովի ջրից օգտվում են տնային տնտեսությունների 3.6%,
- այլ աղբյուրներից օգտվում են տնային տնտեսությունների 0.2%:

10. Գործող սանիտարահիգիենիկ (բնակկոմունալ) պայմաններով ապահովվածությունը, (ըստ պատասխանած տնային տնտեսությունների քանակի) համաձայն տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների\*, բնութագրվում է հետևյալ կերպ՝

- սառը ջուր (խողովակաշարով) ունեն տնային տնտեսությունների 88.6%,
- հոսող ջրով զուգարան ունեն տնային տնտեսությունների 64.8%,
- դրսի զուգարան ունեն տնային տնտեսությունների 38.1%,
- լոգարան, ցնցուղ ունեն տնային տնտեսությունների 49.6%,
- հոսող տաք ջուր (բակ, արիստոն, գեյզեր) ունեն տնային տնտեսությունների 8.7%,
- կենտրոնացված գազամատակարարում ունեն տնային տնտեսությունների 28.6%:

12. **ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2004թ.** հունվար-դեկտեմբերին կազմել է 589140դրամ և 1104 ԱՄՆ դոլար:

13. **Մեկ շնչի հաշվով տնային տնտեսությունների դրամական եկամուտներն** ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների\* ամսական կազմում են 13604 դրամ, այդ թվում՝

- վարձու աշխատանքից 6831 դրամ,
- ինքնազբաղվածությունից 1155 դրամ,
- գյուղմթերքի և անասունի վաճառքից 1052 դրամ,
- սեփականությունից (վարձակալում, տոկոսներ, շահաբաժին) 12 դրամ,
- պետական կենսաթոշակներից և նպաստներից 1792 դրամ,
- տրանսֆերտներից 2031 դրամ,
- այլ եկամուտներ 731 դրամ:

14. **Գործազրկության (պաշտոնական) մակարդակը 2004թ.** դեկտեմբերին կազմել է 9.0 %: Ընդ որում, կանանց գործազրկության մակարդակը 2004թ. դեկտեմբերին կազմել է 12.8 %, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը կազմել է 5.3 %:

15. 2004թ. հունվար-դեկտեմբերին **տնտեսության մեջ զբաղված է եղել 33** բնակչության 34.6 %-ը, այդ թվում կանանց 31.7%-ը, տղամարդկանց՝ 37.7%-ը:

\* Ըստ 2004թ. ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքների: